

Ա.ԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱԳԲԱՏՈՒՆԵԱՅ ԹՄԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԷՆ

ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ (1)

ՆԵՐԿԱՅՑ ուսումնասիրութիւնս նիւթ ունի
Հայ Միջնադարեան պատմութեան
վերջին շրջանը և Նոր դարերու պատմու-
թեան բովանդակ շրջանը: Միջինդարեան
շրջանը կը վերջանայ 1453 թուականով,
երբ Մէհմէտ Բ նուաճեց Բիւզանդիոնի
հսկայ և փխրուն կայսրութեան բեկորները
նոր աշխարհի մը ծնունդ տալով: Իսկ Նոր
դարերու շրջանը կը սկսի այդ թուականէն
և կը վերջանայ 1830 թուականին, ուսկից
կը սկսի մեր ժամանակակից պատմութիւնը,
որ դարադարձ մըն է մեր ազգային նոր
կեանքի և տնոր դարաւոր ողբերգութեան,
որուն նմանը երբեք տեսնուած չէ Հայ
ազգին մէջ:

Միջին և Նոր դարերու այս բարդ շրջանը
կը սկսի 1045 թուականէն, որ է Բագրատ-
տունեաց Թագաւորութեան անկումով, և կը
բովանդակէ գրեթէ ութ դարերու պատմու-
թիւն մը: Ես այդ բազմադարեան շրջանը,
որուն հետ կցուած էր նաեւ Կիլիկիոյ Հայոց
իշխանութեան շրջանը, ամփոփեր էի մէկ
հատորի մէջ, աչքի առջեւ ունենալով որ
այս գիրքը յօրինուած է լիկիւնսական ըն-
թացքի համար, որով ստիպուած էի համա-
ռօտախօս ըլլալ, հարեւանցի յիշատակու-
թիւն մը, երբեմն թեթեւ ակնարկ մը
բաւական համարելով այն պատմական կա-
րեւոր դէպքերու մասին՝ որոնք մասնաւոր
ուշադրութեան մը արժանի էին:

1. Հոս կու տանք նախ գործին օտաւարանը, ուր հեղինակը կը բացատրէ իր ծրագիրը և իր շարժանքները:

Սակայն, երբ ձեռնարկեցի գրել Հայաստանի ժամանակակից պատմութիւնը, իսկապէս Հայ ժողովուրդին գործածութեան համար խմբագրուած, եստայ որ այդ գործը մտք ու թերի պիտի ներկայանար, եթէ անկէ առաջ լոյս չտեսնէր ներկայ հատորը, իբր բանալի մեր ազգային ակեծուկ շրջանին, որ լայն անդունդ մը բացաւ Հայուն և թուրքին միջեւ։ Ասոր համար իմ Ընթերցողու որ այս հատորին մէջ ոչ միայն զուրա չմնան քիչ շատ կարեւորութիւն ունեցող պատմական անցքեր, այլ այդ անցքերը ենթարկել քննական փաստացի վերլուծութեան, որպէս զի զուրա ցատկէն մեր ազգին թերութիւնները, որոնք տաւալաբար չափով պատճառ եղած են մեր անցեալ ու ներկայ ծանր ծանր աղէտներուն։

Թէեւ զիտեմ որ ինքնաքննադատութիւնը,
— որ իբր աւագան մ'է, ուր ոչ միայն կը
մաքրուին մեր ցեղային արատները, այլ և
մեր ժողովուրդը կը դրուի նախաճգ դգու-
շութեան ճամբուն վրայ և զայն տէր կը
կանգնէ իր ճակատագրի տնօրէնութեան, —
մեր ազգէն նկատուած է իբր Հակազգային
զգացումէ ծնունդ առած նորաձեւութիւն
մը՝ իրականը, սակայն, այն է որ ազգային
սխալները առաջ եկած են այնպիսի դէպ-
քերէ, որոնց Հայ ժողովուրդը, մանաւանդ
անոր ղեկավար վարիչները մեծ նշանակու-
թիւն տուած չեն, և սակայն շատ անգամ
այդ դէպքերն են որ վճռած են Հայոց ազգին
ճակատագիրը:

Օրինակի համար, եթէ Հայ կարճատես
նախարարները զաւանդանութեամբ ջնջել

տուած չըլլային Արշակունեաց թագաւորու
թիւնը, անկասկած հայկական «Ոսկեդարի»
փայլը պիտի չմթագնէր Տղմուտ գետի ափե-
րուն վրայ: Եթէ Յունաց Հերակղէս կայսրը
քանի մը լեգէոն աւելի զրկած ըլլար իր
արմատին մէջ խեղդելու Արաբներու արշա-
ւանքը, ոչ միայն Հոյսոստան, Հռոմէական
կայսրութեան պատուարը, ազատած կ'ըլլար
ահաւոր պատուհասէ մը, այլ և փոխած
կ'ըլլար աշխարհի երեսը: Եթէ Բագրատու-
նեաց թագաւորութեան շրջանին, հայ իշ-
խանները փառասիրական զգացումով մղուած
անկախ թագաւորութիւններ չհաստատէին,
Բագրատունեաց թագաւորները պիտի յա-
ջողէին կեդրոնական հզօր միապետութիւն
մը կազմել, և իրենց իշխանութիւնը տա-
րածել բովանդակ երկրի վրայ, զիմադրելով
սելճուքեան թուրքերու արշաւանքներուն,
որոնք տակնուվրայ ըրին Վասպուրական
աշխարհը: Եթէ Անիի, Շիրակի և շրջակայ
գաւառներու մէջ ամփոփուած Բագրատունի
թագաւորութեան չղաւաճանէր Հայ իշխան-
ներու մէկ մասը, գլուխ ունենալով Պետրոս
Գետադարձ Կաթողիկոսը, Գագիկ թագա-
ւորը կարող պիտի ըլլար, — օժանդակ ու-
նենալով հայ իշխանութեանց միութիւնը,
որ նշանակելի զօրութիւն մը կը կազմէր, —
զիմադրել յոյներուն, որով խափանուած
կ'ըլլար Սելճուքեան թուրքերու թալանի և
սպանութեան սանձարձակ ասպատակու-
թիւնը: Ասոնք ոչ թէ Հայաստանի դէմ
վրէժ ունէին, այլ յոյներու դէմ՝ որոնց
տիրապետութիւնը հաստատուելը էր Հայաս-
տանի հողին վրայ: Եթէ երկու քրիստոնեայ
և ցեղով քոյր ազգեր, փոխանակ կրօնական
հակամարտութեամբ իրարու դէմ զինուելու,
իրենց ուժերը միացնէին՝ մնալով իբրեւ
անկախ իշխանութիւններ, անշուշտ Սել-
ճուքեան թուրքերը չէին կազմեր Իկոնկիոյ
սուլթանութիւնը, ճանապարհ բանալով Օս-
մանեան ռազմիկ թուրքերուն, որոնց աշ-
խարհակալ հեղեղը յաղթականօրէն պիտի
չգօրանար Պրուսայի մէջ՝ անկից անցնելու

Համար դէպի Արեւմուտք, դարերով սարսափ
ազդելով ամբողջ Եւրոպայի: Եթէ Ռուբինեան
իշխանութիւնը, հաստատուելով Կի-
լիկեան հողին վրայ՝ Հայոց դաւաճան մե-
ծամեծներու ձեռքով չդաւաճանուէր, այսօր
Կիլիկիան տուելի բազմամարդ և զարգացած
երկիր մը կ'ըլլար քան արդի Եգիպտոսը:

* * *

Ահա թէ ի՞նչ տուին մեզի անխրատ ան-
ցած պատմական դէպքերը, որոնք երբեք
լուրջ նկատողութեան հառաւելացան յայնորու
և Հայերու հռչակաւոր զիւանագիտութե-
ներէ։ Յաւալի է հաստատել, բայց ստոյգ է
որ հսկառակ այս գառն փորձանքներու, այդ
օրինակները երբեք չծառայեցին Հայ ժողո-
վուրդին և իր ղեկավարներուն։ Ճիշտ է,
ամեն ժամանակներու մէջ, ամէն ժողո-
վուրդի քով կը գտնուին միեւնոյն սխալ-
ները, միեւնոյն աննախատեսութիւնները,
միեւնոյն դաւաճանական արասները, միեւ-
նոյն անարդարութիւնները, բայց ոչ մէկ
ժողովուրդին պետերը՝ Հայ ժողովուրդի
պետերուն պէս իրենք իրենց ձեռքով երեք
անգամ իրենց թագաւորական Աթոռները
չեն կործանած, իրենց ազգային անկախու-
թիւնները ջնջած, և փափաքած իրենց ժո-
ղովուրդը դնել օտար տիրապետութեան
լուծին տակ։ Հայ ժողովուրդը, որուն էութե-
թեան մէջ ինքնապահպանման բնագոյր կը
խօսէր, առաջին օրէն իսկ «Ծանետ», ինչ-
պէս կ'ըսէ ժամանակակից անաշու պատ-
միչը Ռուհայեցի, զնենգութիւն Նախարա-
բացն Հայոց, լային առհասարակ ամենայն
տունն Հայոց, և արարին ամենայն քաղաքն
ժողով ուր էին գերեզմանք Հայոց ամենայն
թագաւորացն առաջնոց, և անդ լացին զոն-
տիրանալին ուզոյն Հայոց, լային և ՊԱԹՈՒ
թագաւորութեանն իւրեանց, և կոծ եդեալ
առհասարակ լային զթագաւորն իւրեանց
զԳագիկ, լացին և զամենայն ազգն Քաղրա-
տունեաց, և անեծս ցաւագիւն կարդային

նենգաշորացն Գաղիայ» : (Պատմ. Մատթ. Աւոհ. Երուսաղէմ 1869. 112) :

* * *

Եւ սակայն այն լուցն ու անկէքը բանի մը չծառայեցին, քանի որ անկէ վերջն էր որ Հայոց նենգաւոր մեծամեծները մտանեցին Ռուբինեանց թագաւորութիւնը, և փոխուստի ստիպեցին աղնուական ու հայասէր Լեւոն վերջինը : Այս քսամենի արարքներէ վերջ Հայոց տէրերը փոխուեցան, անոնք ըլլան եկեղեցական թէ աշխարհական՝ գաղափարները փոփոխուեցան կրեցին, բացառութիւն կը կազմեն միայն Հայ ամիրաները, որոնք խորապէս թափանցած Արեւելեան դիւանագիտութեան մէջ, կարող եղան անցեալի դասերէն օգուտ քաղել :

Անցեալի անխրատ մնացած դասերն են ահա՝ որ կը ծանրացնեն մեր ժողովուրդին և իր տէրերուն պատասխանատուութեան բաժինը : Մեր եկեղեցական հին պատմիչները, անկեղծ ու երկիւղած մարդիկ, երբ հարուած մը իջնէր Հայ ժողովուրդին գլխուն, անոնք փոխանակ արգասիքին պատճառները վերլուծելու և պատասխանատուութիւններ ճշտելու, եկած չարիքը կը վերագրէին «Աստուծոյ մեծապատ թախտին» պատժելու համար «Հայ ժողովուրդին մեղքերը» : Իսկ մեր մօտիկ անցեալին գործիչները, Հայ ժողովուրդին գլխէն անցած չարաշար աղէտները փոխանակ իրենց միամիտ և քաղաքականօրէն ահա գործելակերպին վերաբերելու, սովորութիւն դարձուցին մեղադրելու բոլոր աշխարհը, ոչ երբեք իրենք զիրենք : անոնք բանապաշտութեան սկզբունքներով տօգորուած մարդիկ՝ յանդգնեցան մինչեւ իսկ հրապարակու մեղադրանք կարդալ Աստուծոյ, որ, իբր «կոյր» չի տեսներ, եղածները և «գործուած չարիքները չի պատժեր», և որովհետեւ անոնք կը պատկանին գերբնապաշտութեան հաւատակ հոսանքին, որ կը ժխտէ «Գերագոյն

յայտնութեան» գաղափարը՝ իբրեւ «հակառակ մարդկային առողջ դատողութեան», ինկան աւելի կոպիտ սխալի մը մէջ, վասնզի այդ ոճով ուրանալով մարդկային կամքի ազատութիւնը, բանաւոր մարդ էակը դարձուցին մարդ մեքենայ մը, զոր՝ Աստուած ուղղածին պէս կռաւարէր, ինչ որ խակապէս հակառակ է մարդկային առողջ դատողութեան : Անոնք չեն հասկցած, թէ մարդկային պատմութեան անցքերը մարդկային ազատութեան գործն են, որոնց հետ միասին կ'ընթանայ Աստուծոյ ճշմարտութիւնը, և այս զօգին համար է որ ժողովրդական իմաստութիւնը ըսած է, թէ «Դու օգնէ քեզի՝ որ Աստուած օգնէ» :

* * *

Այս 785 տարիներու շրջանը մի միայն ասիական Հայ ժողովուրդին նկարագրին բացասական աղէտաւոր կերպարանքը չի շեշտեր, այլ դուրս կը ցատկեցնէ նաեւ անոր բարոյական յատկանիշներն ալ : Երկար դարերով քաղաքական անկախութիւն ունենալէն յետոյ, նա ինկաւ օտար իշխանութեանց լուծին տակ : Զինուորական փառքերուն տեղ, յաղթանակներու տեղ, նա այս անգամ ցոյց տուաւ իր նկարագրին ուրիշ մէկ կողմը : Նա դատապարտուեցաւ ճաշակելու նախ յունական տիրապետութեան դառնութիւնը, ապա ենթարկուեցաւ պարսկաստանի Սելւկեան թուրքերուն աւերիչ արշաւանքներուն, և յետոյ փոփոխակի ենթարկուեցաւ թաթարներու, Պարսիկներու և Օսմանեան թուրքերու լուծին, մինչեւ որ վերջնականապէս բաժնուեցաւ Օսմանցիներու և Պարսիկներու և ապա Ռուսերու միջեւ : Սակայն և այնպէս, նա գիտցաւ տառապանքին մէջ կռուիլ, տոկալ, մեծամեծ գոհողութիւններով պահել իր քրիստոնեայ կրօնքը, մայրենի լեզուն, իր ազգային աւանդութիւնները, որոնք քաղաքակիրթ ազգի մը հիմքն են, և աւելի

ապրիլ՝ քան զինքը տանջողները : Նա կրեց այնպիսի կեղեքումներ, այնպիսի դժնդակ փորձութիւններ, իր անպաշտպան հողին վրայ տեսաւ Պարսիկ - Թուրք - Ռուս բանակներէ գործուած այնպիսի տէրութիւններ, որոնց նման չունի ուրիշ ոչ և է ժողովուրդի պատմութիւն : Այսօր Հայ ազգին գոյութիւնը առեղծուած մըն է, իր արիւնքներն ու անսպաս կորովին շփու ապացոյց մը, որուն առջեւ ամբարշտուն կը մնայ պատմութեան փիլիսոփայութիւնը :

* * *

Կարեւոր նկատողութեան կէտ մ'այ այն է, որ Բագրատունեաց իշխանութեան կործանումէն մինչեւ մեր օրերը, Հայոց ազգային պատմութիւնը, տառնձին, ինքնուրոյն նկարագիր մը չի ներկայացներ : Կրօնքը միայն, և Հայ եկեղեցին իր Կաթողիկոսով մնացին կանգուն, որոնց մէջ ծածկուած կայ առեղծուածային յայտնի ոյժ մը, իբրեւ խորհրդանշան երբեմնի ազատ անկախ Հայրենիքի : Այսպիսի հանգամանքներու մէջ, այս շրջանի Հայաստանի պատմութիւնը սերտօրէն կապուած է Պարսկաստանի, Թուրքիոյ և Ռուսաստանի, երեք մեծ պետութիւններուն հետ, որով անոնց վեհապետներն՝ միանգամայն Հայոց թագաւորներն են : Եւ որովհետեւ դարեւի ի վեր այդ երեք պետութիւնները մեր ազգային ճակատագրին վճռողներն եղած են, և մեր անցեալին ու ներկային վրայ ահապին ազդեցեալին ու ներկային վրայ ահապին կ'արժէ որ ցութիւն ունեցած են, ուստի կ'արժէ որ մեր ուսումնասիրութեան առարկայ ըլլան այդ երկրները կռաւարողներու քաղաքականութիւնը, որպէս զի գոնէ քիչ չափ թափանցենք մեր զրայցիներուն հոգեբանութեան, որու ազդեցութիւնէն ծնան բողոքական շարժումներ :

Ասկէ գտաւ, ես անհրաժեշտ դատեցի համառօտ ոճով արձանագրելու քանի մը օտար ազգերու պատմական անցքերն ալ, որոնք

աղէտաւոր ազդեցութիւն մը ունեցած են մեր ազգային կեանքին վրայ : Օրինակի համար, չէ կարելի պայծառ գաղափար մը կազմել մեր ազգային ազատագրական շարժումներուն վրայ, եթէ չուրուագծուին Պալէստինեան քրիստոնեայ ազգերու ապստամբական շարժումները, վասնզի թրքաշայ յեղափոխութիւնը՝ ամէն հանգամանքներով կողապարուած է այս սլու ժողովուրդներու ապստամբութեան օրինակին վրայ :

* * *

Բացի մեր Միջին և Նոր դարերու սկանաւոր կամ սկանաւոր պատմիչներէն, որոնք իբրեւ հաստատուն ուղեցոյցներ առնջնորդեցին մեզ, և որոնց անկեղծութեան կը վկայեն նաեւ եւրոպացի պատմագիրքերը, աչքի առջեւ ունեցոյ նաեւ, իբրեւ պատմական աղբիւրներ՝ օտարազգի հին և նոր հեղինակներ : Այս առթիւ, կարեւոր կը տող հեղինակներ : Այս առթիւ, կարեւոր կը համարեմ շեշտել, որ ներկայ և յաջորդ հատորները չխճողելու համար հայ և լատին տառերով, վկայութեան կանչուած օտար ազգի հեղինակներու և անոնց գործերուն մակագիրները՝ նշանակած եմ հայերէն տառերով, ինչ որ շփոթութեան տեղիք չի կրնար տալ, քանի որ այդ հեղինակներուն ու անոնց գիրքերուն այբուբենական ցուցակը՝ լատին տառերով դրուած պիտի ըլլան ամէն մէկ հատորին վերջը :

* * *

Ես մասնաւոր դիտումով ներկայ հատորէն դուրս ձգած եմ Կիլիկիոյ Ռուբինեանց թագաւորութեան շրջանը, որ Միջնադարեան ժամանակի կը պատկանի, և ասիական թէ անոր համար, որ նա միջանկեալ ոչ թէ անոր համար, որ նա միջանկեալ չի ըլլաւ մը կը կազմէ, այլ որովհետեւ ուղղած եմ անոր առանձին հատոր մը յատկացնել, նկատելով Կիլիկիան շրջանին կատարած

մեծ գերը մեր քաղաքական, ընկերական, տնտեսական և իմացական կեանքին մէջ:

* * *

Վերջին նկատողութիւն մըն ալ: Ներկայացնելով Հայաստանի քննական պատմութեան ներկայ հատորը, ինչպէս նաեւ անոր յաջորդող ժամանակակից պատմութեան հատորները հայ ժողովուրդին, ես կը համարձակիմ յայտարարելով՝ թէ իմ գրելու խաւոր նպատակս և փառասիրական միակ տենչանքս եղած են ծառայել Հայ ժողովուրդին, լոյս սփռել անոր մէջ, որ չափազանց մութ ապրած է: Թէեւ գիտեմ, որ վկայութիւններով խճողուած գիրք մը ժողովրդական չի կրնար ըլլալ, զի ժողովուրդը վիպական և զիւցազնական գրուածքներէ համ կ'առնէ, որոնք կը խօսին սրտի հետ, բայց և այնպէս խորապէս համոզուած եմ, որ նա ոյժ պիտի տայ իր մտքին և այս ուսումնասիրութիւնը զօրաւոր խթան մը պիտի դարձնէ գնահատելու լատին ճարտարախօս, փիլիսոփայ և պետական հին հանճարի մը՝ Ալիկերոնի սա անմոռանալի սահմանումը պատմութեան օգտակարութեան մասին: «Պատմութիւնը կ'ըսէ նա, ժառանգներուն վրան է, ձշմարտութեան լոյսը, կեանքի յիշատակը, վարքի վարդապետը, հետքեան պատգամաւոր հրեշտակը»:

Պատմութիւնը նաեւ սփոփարար դեր մը կը կատարէ հալածական ժողովուրդներու մօտ: «Նա կը բանայ, - ինչպէս իրաւամբ կ'ըսէ հայ անուանի պատմագիր մը՝ Հ. Յովսէփ Վ. Գալթիանց, - սաստաւածային արդարութեան թատերաբեմը, անով որ կը վկայէ ամէն դարերու մէջ եղած երկու մեծ ազդեցութիւններու՝ որոնցմէ մին կը ցուցնէ բարիքի կեղծանշանը ոյժն ու զօրութիւնը, իսկ միւսը՝ չարիքի պատիժը՝ որ քեպետ անագան՝ բայց անվրէպ վրայ կը հասնի»:

Պատմութիւնը միայն կրթութեամբ ու բանագէտ անձերու հետաքրքրութիւնը չի յազդեցներ, այլ և ամէն հասակ և ամէն տարիքան անոր մէջ կը գտնէ իր լուսաւորութիւնը: «Քաղաքագէտը, կ'ըսէ նոյն հայ գրիչը, իր խորհուրդները, կարծիքները և մտածութիւնները պէտք է չփէ պատմութեան փորձաքարին, և պատմութիւնը իրեն կը ցուցնէ՝ թէ պէտք է իր տեսութիւններուն վրայ շատ վստահի և անյայտը ստուգի տեղ գնէ. պատմութեան միջոցով է որ իրաւագէտը կը հասնի անցեալ ու ներկայ օրէնսդրութիւններու դիտարկութեան՝ որով տեղեակ կ'ըլլայ թէ այդ օրէնքներէն ո՞րը աւելի բարեւար ազդեցութիւն գործեր է ազդելու վրայ. պատմութիւնն է որ բազում դարերու փորձով՝ յորդ և սուսա նիւթ կը մատակարարէ ճարտասանին, բանաստեղծին և գեղարուեստի հետեւողներուն»:

Այս համոզուելով համոզուած եմ որ հայ ժողովուրդին խնայուած կ'ըլլային շարք մը մեծամեծ տղէտներ, եթէ անոր քաղաքագէտները ուշի ուշով ուսումնասիրած ըլլային պատմութեան դասերը, վասն զի անոնց միտքը պիտի լեցնէր օգտակար փորձերով, յստակ ու ճշտագոյն դատաստանով մօտաւոր և ապագայ իրերու վրայ, և ապաւորիչ օրինակներով զանոնք պիտի առաջնորդէր յառաջատես զգուշութեան և խորհրդական իմաստութեան ճամբուն վրայ, անոր առջեւ դնելով սա անհերքելի ճշմարտութիւնը, թէ «ամէն ազգ իր ձեռքով կը կերտէ իր բարի կամ չար բախտը», հաստատելով նուրբ զիտնագիտութեամբ հատու ասացուածքը՝ թէ «ամէն ժողովուրդ արժանի է իր ճակատագրին»:

Հ. ՍԱՀԱԿ ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ

(Չարտունակելի)

Ս. Ղազար 31 Մայիս 1946

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԷ

ԿԱՆԱՆՁ ՏԵՐԵԻԸ

Առանց ծաղկի, աղքատի պէս արհամարհ
Անհամարձակ շեմիս վրան կը սպասես.
Ներս մըտիր քոյր ընտանիքովդ խոնարհ
Գոյներու տեղ կեանքդ է որ ինձ կը բերես:

Ես ալ այսպէս երբեք ժըպիտ չունեցայ
Երբեք բուրեան ես չունեցայ ծաղիկներ.
Չոր հողին մէջ երկինքն ի՞նչպէս ցոլանայ,
Ներս մըտիր քոյր, քիչ մը դալար գէթ ինձ բեր:

Ո՛րքան երկար եղան կեանքիս ճամբներն,
Ո՛րքան սրտեր փնտռեցի ես սիրելու.
Ներս մըտիր քոյր վաղուան համար քիչ մ'ոյոյս բեր:

Յոյսը թէպէտ սիրոյ նըման չի ծաղկիր,
Բայց կը մընայ դալար սլըսակ վշտերու.
Գոյր իմ իբրեւ անմահութիւն ներս մըտիր:

Քինիս, 2 Միտոմ. 1942

ՆԵՐՈՒՄ

Տէ՛ր, զօրութիւն տուր մարդկութեան ներելու
Տարածելով Գեղի նըման իմ թեւերս.
Թշնամիներս իմ շուքիս տակ կանչելու
Որ ընծայեմ արցունքներուս հետ իմ սէրս:

Բաւ է համբոյր մը սիրոյ մէջ եւ ոխի
Որ փարատին թխտոտ ամպերն աչքերէն,
Ես կ'ուզեմ այս քաղցրութիւնն աշխարհի
Բաժնելով սիրոս իբրեւ նշխար հոգեղէն:

Թէ դժնիկով ինձ խաչ չինեն մահաբեր
Ո՛վ, Աստուած իմ բերկրանքն ինձ տուր ներելու.
Աչքերս երկինք, սիրոս աւաղան մաքրարեր
Աղբիւր ըլլամ արեւոտ ձեռք լըւալու:

Եւ հոն ուր ինձ մարդիկ կոչեն «խաչեցի»,
Հոն խունկի պէս սիրոս մըլտայ աւելի